

**ԹԱՓԱՌՈՂ ՇՆԵՐԻ ՀԵԼՄԻՆԹՈՂՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ**

ՀՏԴ 619: 576. 89. 615

DOI: 10.56246/18294480-2024.16-59

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԻԱՆԱ

ՀԱԱՀ դասախոս,

*Անասնաբուժական և անասնաբուժության սանիտարական
փորձաքննության հետազոտական կենտրոնի տնօրեն,
անասնաբուժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլփոստ՝ lianagrigoryan7878@mail.ru*

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱԱՀ դասախոս,

*Անասնաբուժական և անասնաբուժության սանիտարական
փորձաքննության հետազոտական կենտրոնի առաջատար գիտաշխատող,
Անասնաբուժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլփոստ՝ akobian.anush@gmail.com*

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱԱՀ դասախոս,

*Անասնաբուժական և անասնաբուժության սանիտարական
փորձաքննության հետազոտական կենտրոնի գիտաշխատող,
կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլփոստ՝ gayanemartinovna@gmail.com*

ԵՐԻՔԵԿՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

*«ՀՎԿԱԿ ռեֆերենս» լաբորատորայի նմուշառման
բաժնի պատասխանատու*

Էլփոստ՝ vivarium2016@mail.ru

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼԵՐԻ

ՀԱԱՀ դասախոս,

*Անասնաբուժական և անասնաբուժության սանիտարական
փորձաքննության հետազոտական կենտրոնի ավագ գիտաշխատող,
կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլփոստ՝ grigoryanvg@mail.ru*

***Մարդկանց և կենդանիների հելմինթոզները լայնորեն տարածված են
աշխարհում և մեծ վնաս են պատճառում ինչպես կենդանիներին, այնպես էլ***

մարդկանց: Այդ հիվանդությունների շարքում հատուկ տեղ են գրավում մսակերների հելմինթոզները:

Աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել թափառող շների հելմինթոզների տարածվածությունը Երևան քաղաքում:

Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ, Աջափնյակ համայնքներում թափառող շների հելմինթոֆաունայում առավել տարածված են տոքսոկարոզ, տոքսասկարիդոզ և ունցինարիդոզ հիվանդությունները:

Հետազոտված 652 նմուշներից նշված հիվանդությունների հարուցիչների ձվեր առկա են եղել 371 նմուշներում, որը, ըստ էքսպենսիվության, կազմել է 56,9%: Դրանցից 203 նմուշում եղել են տոքսոկարոզ հիվանդության հարուցիչ ձվեր՝ 31,1% էքսպենսիվություն, 106-ում՝ տոքսասկարիդոզի հարուցիչ ձվեր (16,3% էքսպենսիվություն) և 62-ում՝ ունցինարիդոզի հարուցիչ ձվեր (9,5% էքսպենսիվություն):

Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ և Աջափնյակ համայնքներում շների տոքսոկարոզով, տոքսասկարիդոզով և ունցինարիդոզով վարակվածության ցուցանիշները հերթականությամբ առավել բարձր են եղել ամռան, ապա գարնան, աշնան, իսկ ամենաքիչը՝ ձմռան ամիսներին:

Երևան քաղաքում թափառող շների հելմինթոֆաունայի այսպիսի բազմազանությանը նպաստում են պարբերաբար ներմուծվող շների գլխաքանակի անկանոն աճը, թափառող շների հսկայական քանակը, շների համար առանձնացված վերահսկվող զբոսավայրերի բացակայությունը և այլն:

Բանալի բառեր՝ տոքսոկարոզ, տոքսասկարիդոզ, ունցինարիդոզ, շուն, համայնք:

Ներածություն

Հելմինթների կողմից հարուցվող հիվանդությունները լայն տարածվածություն ունեն ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում: Նրանցում մեծ տեղ են զբաղեցնում մսակերների հելմինթոզները և առավել մեծ վտանգ են ներկայացնում հատկապես զոոնոզները, որոնք ընդհանուր են մսակերների և մարդկանց համար: Առավել տարածված հելմինթոզներին են պատկանում ասկարիդատոզները, հատկապես տոքսոկարոզը և տոքսասկարիդոզը:

Մսակերների ասկարիդատոզները ՀՀ առաջին անգամ նկարագրվել են Ն. Պ. Պապովի կողմից 1924 թվականին՝ Անդրկովկասի տարածաշրջանում անց-

կացված հեղինակության արժանի ժամանակ: 1956 թվականին Ա. Գ. Չոբանյանը նշել է, որ Հայաստանում *Toxocara canis* հարուցիչը հանդիպում է շների 25,5% մոտ [3]:

1984 թվականին Վ. Դավիդյանը և Ա. Չոբանյանը փաստել են, որ տոքսոկարոզը հանդիպում է քաղաքաբնակ շների 20,37%-ի մոտ, և ինտենսիվորեն վարակվում են մինչև 1 տարեկան շները [5]: Վերջին 15 տարիների ընթացքում տոքսոկարոզով շների վարակվածությունը քաղաքային վայրերում ավելացել է 3 անգամ, իսկ գյուղերում ցուցանիշները գրեթե չեն փոխվել [2]:

Մսակերների ասկարիդատոզները հանդիպում են բոլոր կլիմայա-աշխարհագրական գոտիներում և տարածված են ինչպես յուրահատուկ, այնպես էլ ոչ յուրահատուկ տերերի մոտ [6, 7, 8, 9, 11]: Տոքսոկարոզի հարուցիչ ձվերով աղտոտված են լինում ինչպես հասարակական վայրերը, այնպես էլ մանկական հրապարակները [4]: Համաշխարհային առողջապահության տվյալներով՝ աշխարհում ինվազիոն հիվանդություններով վարակված են շուրջ 4,5 միլիարդ մարդ, իսկ հեղինակներով վարակվածները կազմում են շուրջ 99% [10]:

Նյութը և մեթոդը

Հետազոտությունները կատարվել են 2020-2022թթ. ընթացքում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոնի լաբորատորիայում: Հեղինակներով շների վարակվածությունը հետազոտվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ և Աջափնյակ համայնքներում տարվա բոլոր եղանակներին: Շների կղանքի նմուշները հավաքվել են շենքերի բակերից, խաղահրապարակներից, հանգստյան վայրերից, դպրոցների, մանկապարտեզների բակերից և այլն: Հետազոտված շները պատկանել են տարբեր հասակային խմբերի: Հավաքված նմուշները հետազոտվել են հեղինակներով Ֆյուլբերոնի, Դարլինգի, Քալանթարյանի մեթոդներով [1]:

Արդյունքներ և քննարկում

Աղյուսակ 1-ում ամփոփված են Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ և Աջափնյակ համայնքներում իրականացված թափառող շների հեղինակներով ֆաունայի ուսումնասիրության արդյունքներն ըստ տարվա եղանակների:

Հետազոտությունների ընթացքում համայնքներում որոշվել է տոքսոկարոզ, տոքսասկարիդոզ և ունցինարիդոզ հիվանդությունների տարածվածությունը ու վարակվածության էքստենսիվությունն ըստ տարվա եղանակների:

Աղյուսակի տվյալներից երևում է, որ ըստ տարվա եղանակների՝ հիվանդությունների վարակվածության ցուցանիշները տարբեր են: Ուսումնասիրված բոլոր համայնքներում առավել տարածված է եղել շների տոքսոկարոզ հիվանդությունը, ապա տոքսասկարիդոզը, իսկ ամենաքիչը՝ ունցինարիդոզը:

Մալաթիա-Սեբաստիա համայնքում տոքսոկարոզի առավելագույն էքստենսիվությունը գրանցվել է ամռան ամիսներին՝ 46.7%, գարնանը՝ 36.4%, աշնանը՝ 28.9%, ձմռանը՝ 22.5%: Տոքսասկարիդոզի էքստենսիվությունը ամռանը կազմել է 25%, գարնանը՝ 20%, աշնանը՝ 17.8%, ձմռանը՝ 15%, իսկ ունցինարիդոզի դեպքում ցուցանիշները համապատասխանաբար կազմել են ամռանը 16,7%, գարնանը՝ 14,5%, աշնանը՝ 6,7%, ձմռանը՝ 2,5%:

Շենգավիթ համայնքում տոքսոկարոզի առավելագույն էքստենսիվությունը ևս գրանցվել է ամռան ամիսներին և կազմել է 38,5%, գարնանը՝ 35%, աշնանը՝ 26,4%, ձմռանը՝ 18%: Տոքսասկարիդոզի էքստենսիվությունը կազմել է ամռանը 20%, գարնանը՝ 18,3%, աշնանը՝ 11,3%, ձմռանը՝ 10%, իսկ ունցինարիդոզի դեպքում ցուցանիշները համապատասխանաբար կազմել են ամռանը 15.4%, գարնանը՝ 13,3%, աշնանը՝ 3,8%, ձմռանը՝ 2%:

Համանման ցուցանիշներ գրանցվել են նաև Աջափնյակ համայնքում. տոքսոկարոզի առավելագույն էքստենսիվությունը ամռան ամիսներին կազմել է 37,5%, գարնանը՝ 33,9%, աշնանը՝ 24,5%, ձմռանը՝ 14,6%: Տոքսասկարիդոզով վարակվածությունը ամռանը կազմել է 18,8%, գարնանը՝ 16,9%, աշնանը՝ 9,4%, ձմռանը 8.3%, իսկ ունցինարիդոզի դեպքում ցուցանիշները համապատասխանաբար ամռանը կազմել են 14%, գարնանը՝ 11,9%, աշնանը՝ 3,8%, ձմռանը՝ 2%:

Անհրաժեշտ է նշել, որ վարակվածության ցուցանիշները տարբեր համայնքներում տարբեր են, որը պայմանավորված է թափառող շների քանակով, անասնաբուժասանիտարական հսկողության բացակայությամբ, ինչպես նաև տարբեր համայնքներում շնապահության վարման կուլտուրայի տարբեր մակարդակներով:

Աղյուսակ 1.

Թափառող շների հելմինթոֆաունան Երևան քաղաքում՝
ըստ տարվա եղանակների:

Համայնքներ	Տարվա եղանակներ	Հետազոտված (նմուշ)	Վարակված են	էքստենսիվությունը %	Վարակված					
					Տոքսոկարոզ		Տոքսասկարիդոզ		Ունցինարիդոզ	
					Նմուշ	էքստենսիվությունը %	Նմուշ	էքստենսիվությունը %	Նմուշ	էքստենսիվությունը %

Մալթիա-Սերաստիա	Գարուն	55	39	70.9	20	36.4	11	20	8	14.5
	Ամառ	60	53	88.3	28	46.7	15	25	10	16.7
	Աշուն	45	24	53.3	13	28.9	8	17.8	3	6.7
	Զմեռ	40	16	40	9	22.5	6	15	1	2.5
Շենգավիթ	Գարուն	60	40	66.6	21	35	11	18.3	8	13.3
	Ամառ	65	48	73.8	25	38.5	13	20	10	15.4
	Աշուն	53	22	41.5	14	26.4	6	11.3	2	3.8
	Զմեռ	50	15	30	9	18	5	10	1	2
Աջափնյակ	Գարուն	59	37	62.7	20	33.9	10	16.9	7	11.9
	Ամառ	64	45	70.3	24	37.5	12	18.8	9	14
	Աշուն	53	20	37.7	13	24.5	5	9.4	2	3.8
	Զմեռ	48	12	25	7	14.6	4	8.3	1	2.1
Ընդամենը		652	371	56.9	203	31.1	106	16.3	62	9.5

Այսպիսով, հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ թափառող շների կղանքի 652 նմուշներից տոքսոկարոզ, տոքսասկարիդոզ և ունցինարիդոզ հիվանդությունների հարուցիչների ձվեր առկա են եղել 371 նմուշներում, որի դեպքում վարակվածության ընդհանուր էքստենսիվությունը կազմել է 56,9%: Հետազոտված 652 նմուշներից 203-ում եղել են տոքսոկարոզ հիվանդության հարուցիչ ձվեր (31,1% էքստենսիվություն), 106-ում՝ տոքսասկարիդի ձվեր (16,3% էքստենսիվություն) և 62-ում՝ ունցինարիայի ձվեր (9,5% էքստենսիվություն):

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ և Աջափնյակ համայնքների շների կղանքի հետազոտված նմուշները տոքսոկարոզով, տոքսասկարիդոզով և ունցինարիդոզով առավել վարակված են եղել ամռան, ապա գարնան, աշնան և ամենաքիչը՝ ձմռան ամիսներին:

Եզրակացություն

1. Շների տոքսոկարոզ, տոքսասկարիդոզ և ունցինարիդոզ հիվանդությունների հարուցիչների ձվեր առկա են եղել Երևան քաղաքի թափառող շների կղանքի 652 նմուշներից 371-ում, որի դեպքում վարակվածության ընդհանուր էքստենսիվությունը կազմել է 56,9%:

2. Հետազոտված 652 նմուշներից 203-ում եղել են տոքսոկարոզ հիվանդության հարուցիչ ձվեր՝ 31,1% էքստենսիվություն, 106-ում տոքսասկարիդի ձվեր՝ 16,3% էքստենսիվություն և 62-ում ունցինարիդոզի հարուցիչ ձվեր՝ 9,5% էքստենսիվություն:

3. Շների տոքսոկարոզ, տոքսասկարիդոզ և ունցինարիդոզ հիվանդությունների էքստենսիվության առավել բարձր ցուցանիշներ են գրանցվել Մալաթիա-Սեբաստիա համայնքում, իսկ Շենգավիթում և Աջափնյակում վարակվածության ցուցանիշները համեմատաբար ցածր են եղել:

4. Ըստ տարվա եղանակների՝ Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ և Աջափնյակ համայնքներում շների տոքսոկարոզ, տոքսասկարիդոզ և ունցինարիդոզ հիվանդությունները առավել տարածված են ամռան, ապա գարնան, աշնան, իսկ ամենաքիչը՝ ձմռան ամիսներին, որը պայմանավորված է արտաքին միջավայրի ջերմային գործոնով:

5. Երևան քաղաքում թափառող շների հելմինթոֆաունայի այսպիսի բազմազանությանը նպաստում են պարբերաբար ներմուծվող շների գլխաքանակի անկանոն աճը, թափառող շների հսկայական քանակը, շների համար առանձնացված վերահսկվող զբոսավայրերի բացակայությունը և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Նաղաշյան Հ. Զ., Կենդանիների ինվազիոն հիվանդություններ, Լաբորատոր-գործնական պարապմունքների ձեռնարկ, Երևան, 2006, 246 էջ:
2. Նաղաշյան Հ. Զ., Գրիգորյան Վ. Վ., Երևան քաղաքի որոշ տարածքների ու զբոսայգիների հողի վարակվածությունը շների տոքսոկարոզով, Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի գիտական աշխատություններ, N 1, Երևան, 1999, էջ 26-27:
3. Չոբանյան Ա. Գ., Հայկական ՍՍԴ մի քանի շրջաններում շների և աղվեսների հելմինթոֆաունայի ուսումնասիրության արդյունքները, Տեղեկագիր. գյուղատնտեսական գիտություններ, 1965, N 11-12, էջ 135-142:
4. Ахмедов М. Т., Эпидемиология токсокароза у детей (Масштабы проблемы. Обзор) Кыргызская государственная медицинская академия имени И.К. Ахунбаева, 2010, N 1, с. 28-30.
5. Давидянц В. А., Чобанян А. Г., Зараженность собак токсокарозом в Армянской ССР //Бюллетень ОТКЗ ВИГИС, М., 1984, Вып. 38, С.56-57.
6. Делянова Р. Ш., Гельминтофауна собак на территории Узбекистана // Узбекский биологический журнал, 1958, N 5, с. 47-57.
7. Делянова Р. Ш., Качественное разнообразие гельминтов собак в различных географических зонах ССР // Тез. Докл. науч. конф. ВОГ, М., 1997, с. 100-102.
8. Лысенко А. Я., Авдюхина Т. И., Федоренко Т. Н., Куприна Г. Н., Пономарева С. И., Сероэпидемиология токсокароза и токсоплазмоза в смешанных очагах. Иммунологическая структура населения в городском и сельском очагах. // Мед. паразитол., 1987, 3, с. 34-38.
9. Лысенко А. Я., Фельдман Э. В., Рыбак Е. А., Влияние инвазированности детей нематодами на поствакцинальный иммунитет. // Мед. паразитол., 1991, 5, с. 34-36.
10. Сергиев В. П., Результаты эпизоотологического и эпидемиологического мониторинга по токсокарозу на юге России. Текст научной статьи по специальности «Ветеринарные науки», 2019, 13-4, с.17-24,
11. Schantz P. M. Toxocara larva migrans now. // Am. J. Trop. Med. Hyg., 1989, 4, p.21-34.

DISTRIBUTION OF HELMINTHOFAUNA OF STRAY DOGS IN YEREVAN CITY

GRIGORYAN LIANA

*PhD in Veterinary Sciences, Associate Professor of ANAU
Director of experimental research center of Veterinary Medicine
and Veterinary Sanitary, ANAU
e-mail: lianagrigoryan7878@mail.ru*

HAKOBYAN ANUSH

*PhD in Veterinary Sciences, Associate Professor of ANAU
Leading researcher of experimental research center of Veterinary Medicine
and Veterinary Sanitary, ANAU
e-mail: akobian.anush@gmail.com*

PETROSYAN GAYANE

*PhD in Biological Sciences, Associate Professor of ANAU
Researcher of experimental research center of Veterinary Medicine
and Veterinary Sanitary, ANAU
e-mail: gayanemartinovna@gmail.com*

YERIBEKYAN SPARTAK

*Specialist in charge of the Sampling Department
of the "NSSC reference" laboratory
e-mail: vivarium2016@mail.ru*

GRIGORYAN VALERY

*Senior researcher of experimental research center of Veterinary Medicine
and Veterinary Sanitary, ANAU
PhD in Biological Sciences, Associate Professor of ANAU
e-mail: grigoryanvgv@mail.ru*

Human and animal helminthiasis are widespread in the world and cause great damage to both animals and humans. Carnivore helminthosis occupies a special place among a number of diseases.

The aim of the work was to study the prevalence of helminthiasis in stray dogs in the city of Yerevan. As a result of the research, it was found that toxocarosis, toxascaridosis and uncinariasis diseases are most common in the helminth fauna of stray dogs in Malatia-Sebastia, Shengavit, Ajapnyak communities of Yerevan.

Out of 652 examined samples, eggs of pathogens of the mentioned diseases were present in 371 samples, which was 56.9% in terms of prevalence. Among them,

203 samples contained eggs of the causative agent of toxocarosis: 31.1% extensiveness, 106 contained eggs of the causative agent of toxascaridosis /16.3% extensiveness/ and 62 contained eggs of the causative agent of uncinariasis /9.5% extensiveness/.

In Malatia-Sebastia, Shengavit and Ajapniak communities, according to the seasons, the rates of canine toxocarosis, toxascaridosis and uncinariasis infection were higher in summer, then in spring, autumn and least of all in winter months.

The diversity of the helminth fauna of stray dogs in Yerevan is contributed by the irregular increase in the number of regularly imported dogs, the huge number of stray dogs, the lack of supervised walks for dogs, etc.

Keywords: *toxocarosis, toxascaridosis, uncinariasis, dog, community.*

РАСПРОСТРАНЕНИЕ ГЕЛЬМИНТОФАУНЫ БЕЗДОМНЫХ СОБАК В ГОРОДЕ ЕРЕВАНЕ

ГРИГОРЯН ЛИАНА

*Кандидат ветеринарных наук, доцент
Директор Научно-исследовательского центра ветеринарной и
ветеринарно-санитарной экспертизы
электронная почта: lianagrigoryan7878@mail.ru*

АКОПЯН АНУШ

*Ведущий научный сотрудник Научного центра ветеринарной
и ветеринарно-санитарной экспертизы
Кандидат ветеринарных наук, доцент
Преподаватель АНАУ
электронная почта: akobian.anush@gmail.com*

ПЕТРОСЯН ГАЯНЕ

*Научный сотрудник Научного центра ветеринарной и
ветеринарно-санитарной экспертизы
Кандидат биологических наук, доцент
Преподаватель АНАУ
электронная почта: gayanemartinovna@gmail.com*

ЕРИБЕКЯН СПАРТАК

*Ответственный за пробоотборный отдел
референс-лаборатории АО
электронная почта: vivarium2016@mail.ru*

ГРИГОРЯН ВАЛЕРИЙ

*Старший научный сотрудник Научного центра ветеринарной и
ветеринарно-санитарной экспертизы
Кандидат биологических наук, доцент
Преподаватель АНАУ
электронная почта: grigoryanvgv@mail.ru*

Гельминтозы человека и животных широко распространены в мире и наносят большой ущерб как животным, так и человеку. Особое место среди этих заболеваний занимают гельминтозы плотоядных.

Целью работы было изучение распространенности гельминтозов у бездомных собак в городе Ереване. В результате исследований установлено, что токсокароз, токсаскаридоз и унцинариоз наиболее распространены в гельминтофауне бездомных собак в общинах Малатия-Себастья, Шенгавит, Ачапняк г. Еревана.

Из 652 исследованных проб яйца возбудителей указанных болезней присутствовали в 371 пробе, что по распространенности составило 56,9%. Из них 203 пробы содержали яйца возбудителя токсокароза: 31,1% экстенсивности, 106 — яйца возбудителя токсокароза /16,3% экстенсивности/ и 62 — яйца возбудителя токсокароза /9,5% экстенсивности/. В общинах Малатия-Себастья, Шенгавит и Ачапняк, в зависимости от сезона, заболеваемость токсокарозом, токсаскаридозом и унцинариозом собак была выше летом, затем весной, осенью и меньше всего в зимние месяцы.

Разнообразие гельминтофауны бродячих собак в Ереване способствует неравномерный рост численности регулярно ввозимых собак, огромное количество бродячих собак, отсутствие контролируемых выгулов для собак и др.

Ключевые слова: токсокароз, токсаскаридоз, унцинариоз, собака, сообщество.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 05.05.2023թ.:

Հոդվածը գրախոսվել է 14.05.2023թ.:

Ընդունվել է տպագրության 17.05.2024թ.: